Եղիշե Չարենց

Վերադարձ

1

Երբ երկնքի մովում վերջին աստղը հանգավ՝
Նա իր տունը թողեց ու ճանապարհ ընկավ:
Դեմը՝ դաշտն էր հերկած՝ արգավանդ ու խոնավ,
Վերը, հեռո՛ւ-հեռուն, որպես հրե մի նավ,
Առագաստը փռած, հրամանված ու հիր
Բարձրանում էր հեռու արեգակը կարմիր:
Ջով էր դաշտում, չկար դեռ տագնապ ու կրակ,
Ու քայլերով թեթև նա գնում էր արագ,
Հեռանում էր անդարձ, անսփոփ ու լռին
Ու նայում էր հեռու հորիզոնի ծիրին:
Տարօրինակ, մենակ, սրտում կարոտ ու հուր՝
Նա գնում էր արագ ու երգում էր տխուր,
Ու նայում էր հեռու հորիզոնի ծիրին
Եվ լսում էր մի ձայն, որ կանչում էր լռին:
Հեռուներից կապույտ մեղմ կանչում էր նրան
Մի հեռավոր ընկեր, կարոտակեզ մի ձայն,
Մեղմ կանչում էր նրան դեպի երկնի հեռուն
Ու սուլում էր նրան մոռացում ու գարուն:

2

Ու քսվում էր անուշ հովը նրա դեմքին,
Համբուրում էր նրան, որպես սիրող մի կին
Գուրգուրում էր նրան, աներևույթ ու մութ,
Ու կանչում էր դեպի հեռուները կապույտ:
Նա գնում էր թեթև, որպես անփույթ ուրու
Ու ձգվում էր ուղին դաշտում հեռո՛ւ, հեռո՛ւ,
Ոլորվում էր անվերջ, որպես անդարձ մի երգ,
Որ դաշտերը թողած, թողած հովիտ ու հերկ,
Սեգ լեռների միջով, ոլորտներով վերին
Խառնվում է հեռու հորիզոնի ծիրին:
Ու կանչում էր նրան կարոտակեզ մի ձայն,
Շշուկներով անուշ նա ասում էր նրան.
«...Ամեն տագնապ ու հոգս թողած երկրի հողին՝
Քայլի՛ր, քայլի՛ր անվերջ, կարոտներիդ ուղին.
Մի կարոտ է հոգիդ, հեռու աստղի մի փայլ
Քայլի՛ր, քայլի՛ր անվերջ, հավերժասե՛ր եղբայր...
Արեգակը, կարմիր, կբարձրանա հիմա
Ու կփռե հովտում կարմիր տագնապ ու մահ,
Խե՛նթ կխնդա վերից՝ տոփասեր ու զազիր
Քայլի՛ր, քայլի՛ր անվերջ ու լեռները հասիր:
Հովիտներին թողած ամեն տագնապ m հուշ
Տա՛ր լեռների հովին կարոտներդ անուշ,
Որ դաշտերի կարմիր, աղետաբեր մուժում
Չխառնվի հոգիդ ուղիների փոշուն»...
Ու քայլում էր շտապ, սրտում ուրի՛շ մի հուր,
Հեռանում էր անդարձ ու երգում էր տխուր,
Ու քսվում էր քամին նրա տխուր դեմքին,

Համբուրում էր նրան, որպես սիրող մի կին...

3

Իրիկունն էր արդեն փռվել շուրջը նրա,
Երբ նա նստեց ձյունե ճանապարհի վրա:
Ճանապարհը՝ կապույտ՝ ոլորվում էր առաջ
Ու լեռնային մաքուր պտույտներով սառած՝
Վե՛ր էր ձգվում անվերջ՝ խորհրդավոր ու մութ՝
Ու կորչում էր հեռու երկնքի մեջ կապույտ:
Լո՛ւռ էր շուրջը այնպես: Չկար շշուկ ու ձայն:
Իրիկուն էր, ու զով լռություն էր միայն:
Հովը քսվում էր պաղ նրա հոգնած ուսին
Ու պատմում էր հեռու երկինքների մասին...
Բայց չէր լսում կարծես նա խոսքերը նրա
Հոգնություն էր իջել նրա հոգու վրա:
Ու թվում էր նրան, որ քայլել է մի դար...
Լո՛ւռ էր շուրջը այնպես, շուրջը ոչ ոք չկար:
Ու թվում էր նրան կյանքը հեռու մի հուշ,
Որ ցնդել է արդեն ու դարձել է մշուշ...
Ցուրտ էր շուրջը այնպես, լուռ էր շուրջը այնքան
Ու վար նայեց հանկարծ նա աչքերով տարտամ:
Վարը, որպես հեռո՛ւ, անդարձ կյանքի մի հուշ՝
Տարածվել էր մի նուրբ ու թափանցիկ մշուշ:
Մայր էր մտնում հեռուն արեգակը բոսոր
Ու ժպտում էր կարմիր, հեռավոր ու հզո՛ր...
Ու կարմրածոր վառվող, կարմիր սրտից նրա
Վար էր ծորում՝ թմրած հովիտների վրա՝
Ջերմ արյունը նրա կաթիլներով հրկեզ

Ու վառվում էր դաշտում, հրդեհվում էր կարծես:
Ու արյունը նրա իրիկնային մուժում
Խառնվում էր հեռու ուղիների փոշուն...

4

Նա նայում էր մեռնող արեգակի հրին
Եվ, չգիտեր ինչո՞ւ, արտասվում էր լռին:
Սիրտը զարկում էր խուլ, որպես ջարդած մի զանգ
Ու անցնում էր հոգուց մի հրաշունչ հոսանք:
Որպես վառվող մի սիրտ, ողջակիզվող կրակ,
Մայր էր մտնում հեռուն արեգակը հրակ,
Որ գիշերից հետո, որպես հրե մի վարդ,
Նորից վառվի ծիրում ու բարձրանա զվարթ
Եվ լափվելով անվերջ իր կարմրակեզ հրից՝
Երկինքների մովում ողջակիզվի նորից
Որ դաշտերին խոնավ, ճահիճներին ճղճիմ
Տա՛ իր վառվող հոգու ոսկիները վերջին...
Նա լալիս էր անօգ, երբ սրտաբեկ զգաց,
Որ բռնկվեց սրտում արնաշաղախ մի կայծ:
Ոտքի ելավ հանկարծ, շուրջը նայեց մի պահ
Լո՛ւռ էր շուրջը այնպես, լռություն էր ու մահ:
Հովը նորից քսվեց նրա հոգնած ուսին
Ու փսփսաց հեռու երկինքների մասին...
Բայց չլսեց նրան: Սրբեց աչքերը թաց
Եվ արևի՛ հրին կարոտակեզ ժպտաց:
Եվ հայացքը հառած արեգակի շողին
Նա ժպտալով բռնեց վերադարձի ուղին...
Եվ վայր իջավ արագ հեռուներից պարապ

Ու ճչում էր հոգին, որպես մեռնող կարապ,
Սեգ լեռների վրա, լուրթ երկնքի միջում
Գովքն էր երգում մահի, որպես մեռնող թռչուն:
Մայր էր մտնում հեռուն արեգակը հրակ
Ու քայլերով թեթև նա իջնում էր արագ,
Որ համբուրե այնտեղ, հովիտներում ճղճիմ,
Բորբ արևի թողած ոսկիները վերջին...

1918 հուլիս